ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N << ԵՔ-ԳՀԾՁԲ-19/42>>

ք. Երևան «18» «ապրիլի» 2019 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է.Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷԼԻՏԲԱՍ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ.Նիկողոսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ավտոտրանսպորտի վարձակալության ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 15834000 (տասնհինգ միլիոն ութ հարյուր երեսունչորս հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատուցված ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու

վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրով նախատեսված Գնորդի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Շենգավիթ, Նուբարաշեն, Էրեբունի, Դավթաշեն, Քանաքեռ-Զեյթուն, Արաբկիր և Նորք-Մարաշ վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Երևանի քաղաքապետարան ք. Երևան, Արգիշտիի փ. 1 ՀՎՀՀ 02593108	«Էլիտբաս» ՍՊԸ ք. Երևան, Սայաթ Նովա 19, Անի Պլազա «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Հ/Հ 1150010262810100 ՀՎՀՀ 01242623
Է.Կիրակոսյան ---------- (ստորագրություն) Կ.Տ.	Գ.Նիկողոսյան ---------- (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
« 18 » «ապրիլի» 2019 թ. կնքված
ԵՔ-ԳՀԾՁԲ-19/42 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների հանգստի կազմակերպում

ՀՀ դրամ

Ծառայության								
Հ/Հ	ԳՄԱ կոդ (CPV)	տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	միավոր գինը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	Ժամկետը
1	60171200/16	ՆորՆորք վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ամառային հանգիստը կազմակերպել 3 հերթափոխով՝ 19.06.2019-08.07.2019, 08.07.2019-27.07.2019 և 27.07.2019-15.08.2019թթ:Ծաղկածորի ճամբարներից մեկում /ընդամենը 4 երթ/: Հանգստացողների ցուցակում ընդգրկվում են կարիքավոր ընտանիքների թվով 100 երեխաներ, որոնց ընտրությունը կատարվում է նրանց բնակարանային, կենցաղային և սոցիալ-տնտեսական պայմանների ուսումնասիրության հիման վրա՝ առաջնորդվելով ՀՀ պետական նպաստների մասին ՀՕ-205-Ն օրենքով: Երեխաներին նշված վայր տեղափոխելու համար անհրաժեշտ էփոխադրամիջոց առնվազն 50 նստատեղով և օդափոխիչներով, արտասահմանյան արտադրության, 2014թ. և ավելի բարձր թվականի արտադրության, տեխնիկական զննություն անցած, ապահովված անհրաժեշտ բոլոր սարքավորումներով /տաքացման և սառեցման համակարգով/, դեղարկղով: Սրահը լինի խնամված, մաքուր, նստատեղերը լինեն գերազանց վիճակում:Վարորդը պետք է ունենա համապատասխան որակավորում,վարորդական իրավունք: Ծառայությունը իրականացվում է ըստ պահանջի: Պատվերի դեպքում վարձակալի կողմից ավտոմեքենան պետք է ժամանակին տրամադրվի:	կմ	464.3	260000	560	ք. Երևան Գայի 19	Նախատեսվում է գնել 2019 թվականի ընթացքում՝ ընդ որում մինչև օգոստոսի 30-ը ներառյալ

Սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական և հիշատակի օրերին աջակցություն

ՀՀ դրամ

Ծառայության								
Հ/Հ	ԳՄԱ կոդ (CPV)	տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	միավոր գինը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	Ժամկետը
2	60171200/17	Վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական և հիշատակի օրերին աջակցության նպատակով նախատեսվում է 2019թ. ընթացքում կազմակերպել այցելություններ Երևանի մշակութային օջախներ՝Ե. Չարենցի տուն-թանգարան,Ս. Փարաջանովի թանգարան,Հայատանի ազգային պատկերասրահ /բոլոր երթերը ետադարձով/, էքսկուրսիաներ քաղաքից դուրս ետադարձով՝ Դիլիջան՝Հաղարծին վանքային համալիր,Ծաղկաձոր՝Կեչառիս վանական համալիր, Աբովյան՝Պողոս-Պետրոս եկեղեցական համալիր, Աշտարակ՝ Մուղնի գյուղի Ս. Գևորգ եկեղեցիի, Գեղարքունիք՝ Սևան (3 անգամ), Ծաղկաձոր, Աբովյան ՝ Արզնի գյուղ : Նշված փոխադրումների իրականացման համար անհրաժեշտ է փոխադրամիջոց, որը պետք է համապատասխանի հետևյալ չափանիշներին՝ գ 25-ից 30 փափուկ նստատեղով և օդափոխիչներով, արտասահմանյան արտադրության, 2002թ. և ավելի բարձր թվականի արտադրության, տեխնիկական զննություն անցած, ապահովված անհրաժեշտ բոլոր սարքավորումներով /տաքացման և սառեցման համակարգ,անվտանգության գոտիներ,դեղարկղ,կրակմարիչ և այլն/: .վարորդը պետք է ունենա համապատասխան որակավորում,վարորդական իրավունք: Ծառայությունը իրականացվում է ըստ պահանջի: Պատվերի դեպքում վարձակալի կողմից ավտոմեքենան պետք է ժամանակին տրամադրվի:Ավտոբուսների վազքի ընդհանուր հանրագումարը 2000 կմ, երթուղին՝ ՀՀ ամբողջ տարածքով:	կմ	430	860000	2000	ք. Երևան Գայի 19	Նախատեսվում է գնել 2019 թվականի ընթացքում՝ ընդ որում մինչև դեկտեմբերի 25-ը ներառյալ

Հինապարտների հաշվառման, զորակոչի, զորահավաքի և վարժական հավաքների կազմակերպմանն աջակցություն

ՀՀ դրամ

Ծառայության								
Հ/Հ	ԳՄԱ կոդ (CPV)	տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	միավոր գինը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը
3	60171200/18	Զինապարտների հաշվառման, զորակոչի, զորահավաքի և վարժական հավաքների կազմակերպման նպատակով անհրաժեշտ է փոխադրամիջոց, որը պետք է համապատասխանի հետևյալ չափանիշներին՝ գ 25-ից 30 փափուկ նստատեղով և օդափոխիչներով, արտասահմանյան արտադրության, 2002թ. և ավելի բարձր թվականի արտադրության, տեխնիկական զննություն անցած, ապահովված անհրաժեշտ բոլոր սարքավորումներով /տաքացման և սառեցման համակարգ,անվտանգության գոտիներ,դեղարկղ,կրակմարիչ և այլն/: .վարորդը պետք է ունենա համապատասխան որակավորում,վարորդական իրավունք: Ծառայությունը իրականացվում է ըստ պահանջի: Պատվերի դեպքում վարձակալի կողմից ավտոմեքենան պետք է ժամանակին տրամադրվի:	կմ	430	860000	2000	ք. Երևան Գայի 19	Նախատեսվում է գնել 2019 թվականի ընթացքում՝ ընդ որում մինչև դեկտեմբերի 25-ը ներառյալ

ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների հանգստի կազմակերպում

ՀՀ դրամ

Հ/Հ	ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Չ/Մ	միավոր գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	կատարման	
								հասցեն	ժամկետը
4	Ավտոբուսների վարձակալություն՝ Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների հանգստի կազմակերպում	60171200/20	Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների հանգստի կազմակերպումը ճամբարներում՝ տեղափոխում և ետ վերադարձ ավտոբուսներով: Նշված փոխադրումների իրականացման համար անհրաժեշտ են 45-50 կամ՝ 25-ից 30 փափուկ նստատեղով , 2010թ. և ավելի բարձր թվականի արտադրության, տեխնիկական զննություն անցած, ապահովված անհրաժեշտ բոլոր սարքավորումներով	ծառայություն		Մինչև 860000		Ք. Երևան Գ. Նժդեհի 26	Ձեռք բերման նախընտրելի ժամկետ է սահմանվում Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից

	(ծախսային հաշիվ՝900022750591)		/տաքացման և սառեցման համակարգով/, դեղարկղով: Սրահը լինի խնամված, մաքուր, նստատեղերը լինեն գերազանց վիճակում: Ծառայությունները պետք է մատուցվեն պատվիրատուի կողմից առնվազն 2-օր առաջ ներկայացված պատվերի հիման վրա: Պատվերները կարող են լինել ՀՀ ամբողջ տարածքում: Ծառայությունը իր մեջ ներառում է անհրաժեշտ սպասելավարձը:						մինչև 2019թ. դեկտեմբերի 25-ը
5	Ավտոբուսների վարձակալություն՝ Սոցիալապես անապահով անձանց աջակցություն (ծախսային հաշիվ՝900022750625)	60171200/21	Սոցիալապես անապահով անձանց տոնական և հիշատակի օրերին հուշահամալիրներ, միջոցառումների կազմակերպման վայրեր տեղափոխելու համար տրանսպորտային միջոցի վարձակալություն՝ (ավտոբուս) ցանկացած մակնիշի: Միջոցառման ժամանակ մասնակիցների տեղափոխում և ետ վերադարձ ավտոբուսներով: Նշված փոխադրումների իրականացման համար անհրաժեշտ են 45-50 կամ՝ 25-ից 30 փափուկ նստատեղով , 2010թ. և ավելի բարձր թվականի արտադրության, տեխնիկական զննություն անցած, ապահովված անհրաժեշտ բոլոր սարքավորումներով /տաքացման և սառեցման համակարգով/, դեղարկղով: Սրահը լինի խնամված, մաքուր, նստատեղերը լինեն գերազանց վիճակում: Ծառայությունները պետք է մատուցվեն պատվիրատուի կողմից առնվազն 2-օր առաջ ներկայացված պատվերի հիման վրա: Պատվերները կարող են լինել ՀՀ և Արցախի հանրապետության ամբողջ տարածքում: Ծառայությունը իր մեջ ներառում է անհրաժեշտ սպասելավարձը:	ծառայություն		Մինչև 450000		Ք. Երևան Գ. Նժդեհի 26	Ձեռք բերման նախընտրելի ժամկետ է սահմանվում Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2019թ. դեկտեմբերի 25-ը

Ձինապարտների հաշվառման, զոակոչի,զորահավաքի և վարժական հավաքների կազմակերպմանը աջակցություն

ծառայություն								
Ձ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Ձ/Մ	միավոր գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	մատակարարման	
							հասցեն	ժամկետը

6	60171200/19	Շենգավիթ վարչական շրջանի զորակոչիկների և զինապարտների տեղափոխում և ետ վերադարձ ավտոբուսներով: Նշված փոխադրումների իրականացման համար անհրաժեշտ են 45-50 կամ՝ 25-ից 30 փափուկ նստատեղով , 2010թ. և ավելի բարձր թվականի արտադրության, տեխնիկական զննություն անցած, ապահովված անհրաժեշտ բոլոր սարքավորումներով /տաքացման և սառեցման համակարգով/, դեղարկղով: Սրահը լինի խնամված, մաքուր, նստատեղերը լինեն գերազանց վիճակում: Ծառայությունները պետք է մատուցվեն պատվիրատուի կողմից առնվազն 2-օր առաջ ներկայացված պատվերի հիման վրա: Պատվերները կարող են լինել Երևան քաղաքում,ինչպես նաև ՀՀ և Արցախի հանրապետության ամբողջ տարածքում: Ծառայությունը իր մեջ ներառում է անհրաժեշտ սպասելավարձը:	ծառ.		Մինչև 1290000		Շենգավիթ վարչական շրջան	նախընտրելի ժամկետ է համարվում պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25.12.2019թ

ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Անապահով ընտանիքներին աջակցություն

Ծառայության								
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Հ/Մ	միավոր գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը
7	60171100/1	Սոցիալապես անապահով երեխաներին ճամբար տանելու տրանսպորտի վարձակալության ծառայություն Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի սոցիալապես անապահով երեխաներին Լուսաբաց ճամբար տանելու և ետ բերելու /երեք հերթափոխ/ նպատակով տրանսպորտի վարձակալության ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ է. Մեքենա, որը պետք է համապատասխանի հետևյալ չափանիշներին. --մարդատար, առնվազն 2006թ արտադրության, անկախ մակնիշից, տեխնիկապես սարքին վիճակում --մեքենան պետք է ունենա առնվազն 30 նստատեղ --կահավորված լինի փափուկ նստատեղերով, օդափոխիչով --պետք է ապահովված լինի դեղարկղով, ինչպես նաև մեքենայի առնվազն երկու կողմից փակցված լինի ցուցանակ, որի վրա գրված լինի <Երեխաներ>: Վարորդ, որը պետք է ունենա համապատասխան որակավորում, վարորդական իրավունք:	դրամ		Մինչև 200000	1	Նուբարաշեն վարչական շրջան	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2019թ.<սեպտեմբերի><20>-ը ներառյալ

ԷՐԵԲՈՒՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Զինապարտների հաշվառման, զորակոչի

Ծառայության								
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Հ/Մ	միավոր գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը
8	60171100/15	Էրեբունի վարչական շրջանի զորակոչի կազմակերպման աջակցության համար անհրաժեշտ են 50 տեղանոց մարդատար տրանսպորտային միջոցներ վարորդի հետ միասին: Տրանսպորտային միջոցը /արտասահմանյան արտադրության, ցանկացած գույնի/ պետք է լինի 2010 և ավելի բարձր թվականի արտադրության, տեխնիկական զննություն անցած, ապահովված անհրաժեշտ բոլոր սարքավորումներով /տաքացման և սառեցման համակարգով/, դեղարկղով:Սրահը լինի խնամված,մաքուր, նստատեղերի զսպանակները լինեն ամուր վիճակում:	Կմ	430	860000	2000	Էրեբունի վարչական շրջան	Ձեռք բերման ժամկետ է սահմանվում Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը

Սոցիալապես անապահով ընտանիքներին

Ծառայության								
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Հ/Մ	միավոր գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը
9	60171100/16	Էրեբունի վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական և հիշատակի օրերին աջակցության համար անհրաժեշտ են 50 տեղանոց մարդատար տրանսպորտային միջոցներ վարորդի հետ միասին: Տրանսպորտային միջոցը /արտասահմանյան արտադրության, ցանկացած գույնի/ պետք է լինի 2010 և ավելի բարձր թվականի արտադրության, տեխնիկական զննություն անցած, ապահովված անհրաժեշտ բոլոր սարքավորումներով	Կմ	430	860000	2000	Ք. Երևան Էրեբունի վարչական շրջան	Ձեռք բերման նախընտրելի ժամկետ է սահմանվում Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը

		/տաքացման և սառեցման համակարգով/, դեղարկղով: Սրահը լինի խնամված, մաքուր, նստատեղերի զսպանակները լինեն ամուր վիճակում:						

ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական օրերին աջակցություն

ՀՀ դրամ

Ծառայության							
ՀՀ	ԳՄԱ կոդ (CPV)	տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
10	60171200 /24	**Պետք է իրականացվի ավտոբուսի վարձակալության ծառայությունների մատուցում՝ ըստ վարչական շրջանի աշխատակազմի կողմից ներկայացված պատվերի՝ ապահովելով բարձրակարգ սպասարկում:** Ծառայության մատուցման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցը պետք է լինի տեխնիկապես սարքին և մաքուր վիճակում, նոր անվադողերով, փափուկ նստատեղերով, նախատեսված առնվազն 51 ուղևորի համար, ապահովված լինի բոլոր անհրաժեշտ սարքերով (անվտանգության գոտիներ, դեղարկղ, կրակմարիչ և այլն): Վարորդը պետք է ունենա վարորդական իրավունք, համապատասխան որակավորում և ուղևորների հետ շփման ունակություն: Ծառայությունը պետք է իրականացվի ըստ պահանջի և պատվերի դեպքում 30 րոպեի ընթացքում կատարողի կողմից ավտոմեքենան պետք է տրամադրվի պատվիրատուին: Ծառայության մատուցման ընդհանուր ծավալը կազմում է 3000 կմ:	դրամ	Մինչև 1290000	1	ք. Երևան Դ. Անհաղթի 11	նախընտրելի ժամկետ է համարվում պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2019

Զորակոչի կազմակերպմանն աջակցություն

Ծառայության							
Հ/Հ	ԳՄԱ կոդ (CPV)	տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
11	60171200 /23	**Պետք է իրականացվի ավտոբուսի վարձակալության ծառայությունների մատուցում՝ ըստ վարչական շրջանի աշխատակազմի կողմից ներկայացված պատվերի՝ ապահովելով բարձրակարգ սպասարկում:** Ծառայության մատուցման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցը պետք է լինի տեխնիկապես սարքին և մաքուր վիճակում, նոր անվադողերով, փափուկ նստատեղերով, նախատեսված առնվազն 51 ուղևորի համար, ապահովված լինի բոլոր անհրաժեշտ սարքերով (անվտանգության գոտիներ, դեղարկղ, կրակմարիչ և այլն): Վարորդը պետք է ունենա վարորդական իրավունք, համապատասխան որակավորում և ուղևորների հետ շփման ունակություն: Ծառայությունը պետք է իրականացվի ըստ պահանջի և պատվերի դեպքում 30 րոպեի ընթացքում կատարողի կողմից ավտոմեքենան պետք է տրամադրվի պատվիրատուին: Ծառայության մատուցման ընդհանուր ծավալը կազմում է 3000 կմ:	դրամ	Մինչև 1290000	1	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան	նախընտրելի ժամկետ է համարվում պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2019

ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների հանգստի կազմակերպում

Ծառայության								
